ԱՄՐԱՊՆԴՎՈՒՄ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԿԱՊԵՐԸ

Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Ս. Գ. Հարությունյանը մարտի 3-ին ընդունեց Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ստեղծագործական միությունների՝ Հայաստանում գտնվող պատվիրակությանը: Նա ջերմորեն ողջունեց Լեռնային Ղարաբաղի պատվիրակներին, նրանց պատմեց ավերիչ երկրաշարժից տուժած շրջաններում վերականգնման աշխատանքների ընթացքի, այն օգնության մասին, որ մեզ ցույց են տալիս բոլոր եղբայրական միութենական հանրապետությունները, միջազգային հանրությունը: Ընկ. Ս. Գ. Հարությունյանն առանձնապես ընդգծեց ԼՂԻՄ-ի աշխատավորների օգնությունն ու աջակցությունը, որոնք կիսեցին Հայաստանի ցավը:

Տեղի ունեցավ հանգամանալի խոսակցություն, որին մասնակցում էին ԼՂԻՄ-ի կուլտուրայի վարչության պետ Լ. Ղազիյանը, ԼՂԻՄ-ի ստեղծագործական կազմակերպությունների ղեկավարները. գրողների՝ Վ. Հակոբյանը, կոմպոզիտորների՝ Է. Ղազարյանը, թատերական գործիչների՝ Ի. Հովհաննիսյանը, նկարիչների՝ Ս. Գաբրիելյանը, ժուռնալիստների՝ Ա. Բալայանը, գրքասերների ընկերության՝ Է. Նազարյանը, ճարտարապետների՝ Վ. Հովսեփյանը, Նորագյուղի «Հաղթանակ» կոլտնտեսության նախագահ Ա. Գալստյանը: Ընդգծվեց, որ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում հատուկ կառավարման սահմանումը միակ ընդունելի փոխզիջողական լուծումն է, որը նպատակամղված է ռեգիոնի իրադրության կարգավորմանը: Հատուկ կառավարում մտցնելով, պայմաններ են ստեղծվել իրականացնելու ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի որոշմամբ նախատեսված միջոցառումները Լեռնային Ղարաբաղի էկոնոմիկայի ու մշակույթի զարգացման, կուտակված բազմաթիվ պրոբլեմների կոմպլեքսային լուծման ուղղությամբ:

Այդ բոլոր հարցերի լուծման ասպարեզում կարևոր առաքելություն ունեն ստեղծագործական աշխատողները, ամբողջ մտավորականությունը:

Հանդիպման մասնակիցները համակարծիք էին, որ Հայաստանի ու ԼՂԻՄ-ի ստեղծագործական կազմակերպությունների կապերը Հայաստանի և ինքնավար մարզի աշխատավորներին կօգնեն ակտիվորեն մասնակցելու գրականության և մշակույթի, սովետական բազմազգ մշակույթի զարգացման բազմակողմանի պրոցեսին, Լեռնային Ղարաբաղի բնակչությանը հաղորդակցել իր ժողովրդի հոգևոր հարստություններին: Ընդգծվեց այն բանի բացառիկ կարևորությունը, որ այդ կապերի մեջ ներգրավվեն ոչ միայն Երևանի ու Ստեփանակերտի աշխատավորները, այլև գյուղական շրջանների բնակչությունը, երիտասարդությունը:

ԼՂԻՄ-ի պատվիրակության անդամները շնորհակալություն հայտնեցին սրտագին ընդունելության համար, Հայկական ՍՍՀ կոմունիստներին, բոլոր աշխատավորներին հաջողություններ մաղթեցին հանրապետության բարոյական մթնոլորտի առողջացման, երկրաշարժի հասցրած ծանր վերքերի բուժման գործում:

Զրույցին մասնակցում էին Հայաստանի կոմկուսի Կենտկոմի քարտուղար Գ. Ա. Գալոյանը, ՀԿԿ Կենտկոմի գաղափարախոսական բաժնի վարիչ Գ. Ե. Ասատրյանը:

•°•

Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ստեղծագործական կազմակերպությունների պատվիրակության անդամներին ընդունեց Հայաստանի կոմկուսի Կենտկոմի քարտուղար Գ. Ա. Գալոյանը: Նրանք զրույց ունեցան ՀԿԿ Կենտկոմի գաղափարախոսական բաժնում, հանդիպում ունեցան հանրապետության ստեղծագործական միությունների և հասարակական կազմակերպությունների ղեկավարների հետ, նշեցին Հայաստանի ու ԼՂԻՄ-ի մշակութային կապերի ընդլայնման ուղիները: Պայմանավորվածություն ձեռք բերվեց առաջիկա համատեղ աշխատանքի հիմնական ուղղությունների շուրջը:

Հանդիպումների ու զրույցների ընթացքում ելույթ ունեցան Հայաստանի գրողների միության վարչության նախագահ Հ. Հովհաննիսյանը, Հայաստանի ճարտարապետների միության վարչության նախագահ Ա. Գրիգորյանը, Հայկական ՍՍՀ պատմության ու մշակույթի հուշարձանների պահպանման ընկերության հանրապետական խորհրդի նախագահ Վ. Հարությունյանը, Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր պատմության ու մշակույթի հուշարձանների պահպանման ու օգտագործման գլխավոր վարչության պետ Լ. Բաղդասարյանը, Հայաստանի կինեմատոգրաֆիստների միության վարչության նախագահ Ս. Իսրայելյանը, Հայաստանի նկարիչների միության վարչության նախագահ Ա. Ծիրազը, Հայաստանի ժուռնալիստների միության վարչության նախագահի առաջին տեղակալ Ա. Գևորգյանը, Հայկական ՍՍՀ կուլտուրայի մինիստր Ցու. Մելիք-Օհանջանյանը, Հայկական ՍՍՀ հրատպետկոմի նախագահ Գ. Մուղնեցյանը, ՀԿԿ Կենտկոմի հրատարակչության դիրեկտոր Գ. Թորոսյանցը, Հայաստանի կոմպոզիտորների միության վարչության նախագահի տեղակալ Լ. Զաուշյանը, գրող Զ. Բալայանը, Հայաստանի գրքասերների ընկերության վարչության նախագահի առաջին տեղակալ Լ. Միրիջանյանը, թատերական գործիչների միության Լեռնային Ղարաբաղի բաժանմունքի քարտուղար Ի. Հովհաննիսյանը, գրողների միության մարզային բաժանմունքի նախագահ Վ. Հակոբյանը, ԼՂԻՄ-ի կուլտուրայի վարչության պետ Լ. Ղազիյանը և ուրիշներ:

•

(Արմենպրես)